ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1958 Общественные науки

Զ. Քոչիճյան

ՏՐՈՀՎՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տրոհվող լրացումների ուսումնասիրման հարցը խիստ կարևոր է, և զարմանալի է, որ հայերենի քերականության մեջ դեռևս իր գիտական լուսաբանումը չի գտել, մանավանդ որ ռուսական քերականության մեջ այդ ուսումնասիրված ու մշակված հարց է և տեղ է գտել ոչ միայն գիտական աշխատություններում, այլև դպրոցական ձեռնարկներում։

Տրոհվող լրացումների գաղափարը հայերենի քերականության մեջ առաջին անգամ մտցրել է պրոֆեսոր Ա. Ղարիբյանը։ Դեռևս 1945 թ. նա գրել է. «...անհրաժեշտ է քերականության մեջ սահմանել տրոհվող լրացումների կարգ և ուսուցանել այդ քերականության ամրողջության մեջ՝ կապված հատկապես շարահյուսության հետ (ընդգծումն իմն է.— Զ. Ք.)»[1]։

Հետագայում, սակայն, տրոհվող լրացումների ուսումնասիրման հարցով զբաղվողներ չեղան, և մինչև օրս էլ այն անտեսված է։ Իսն նյութին անցնելուց առաջ հարկ ենք համարում խոսել հայերենում լրացումների տրոհմանը նպաստող պայմանների և հանգամանքների մասին։

1. Հայերենում լրացումների տրոհումը առաջին հերթին պայմանավորված է նախադասության անդամների շարադասությամբ։ Շրջուն շարադասության դեպքում տրոհվող անդամներ ավելի հաճախ են պատահում, որովհետև «ոչ իր տեղում» հանդես եկող այս կամ այն անդամը ավելի է շեշտվում, մի տեսակ «առանձնանում» մյուս անդամներից։

Այսպես, օրինակ՝

Միաձուլվենք, վերջ տանք դաշնակցական արյունոտ տիրապետությանը, ստեղծենք մեր նոր աշխարհը՝ հզոր ու ազատ (Ա. Հովսեփյան, «Միրտ»)։

Այս օրինակում «հզոր ու ազատ» որոշիչը ետադաս է, անմիջապես հաջորդում է իր որոշյալին (աշխարհը)։ Նման շարադասությունն է պատճառ դարձել, որ որոշիչը շեշտվել և տրոհվել է իր որոշյալից։ Սովորական շարադասության ժամանակ նա չի տրոհվի։ Այսպես՝

Միաձուլվենք, վերջ տանք դաշնակցական արյունոտ տիրապետությանը, ստեղծենք հզոր ու ազատ մեր նոր աշխարհը։

2. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տրոհմանը նպաստող նախապայմաններից մեկն էլ լրացման ծավալն է. որքան ծավալուն է լինում լրացման դերում հանդես եկող կապակցությունը, այնքան հավանական է դառնում տրոհումը։ Օրինակ՝

Մարտին աղբերը, նրա առջևը նստած, լսում էր (Ավետիք Իսահակյան, «Հեքիաթ»)։

Այս նախադասության մեջ «նրա առջևը նստած» լրացումը տրոհվել է

---

1. Ա. Արովյանի անվան Հայկական Պետ. մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», № 2, 1945, էջ 187։

ծավալուն բառակապակցությամբ արտահայտված լինելու պատճառով։ Որքան փոքրացնենք այդ դերբայական դարձվածի ծավալը, այնքան անհավանական կլինի տրոհումը, իսկ երբ այս լրացումը արտահայտվի միայն գերբայով, տրոհման կարիք չի զգացվի։ Կստացվի այսպիսի նախադասություն՝ Մարտին աղբերը նստած լսում էր։

Որ լրացման ծավալուն լինելը նպաստում է նրա տրոհմանը, այդ երևում է նաև նրանից, որ ածականով արտահայտված ետադաս լրացումները (որոշիչ, պարագա) տրոհվում են միայն բաղմակիությանն դեպքում։ Օրինակ՝

...Սուսանն ամեն օր անցնում եր Ղուկասի սենյակի մոտով ու նորից ետ դառնում՝ տխուր ու սրտաբեկ (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Այս օրինակում «տխուր և սրտաբեկ» ձևի պարագան տրոհվել է, որովհետև ետադաս է և բաղմակի. բաղմակի չլինելու դեպքում չի տրոհվի, որովհետև լրացման ծավալը կփոքրանա։ Այսպես՝

Այդ օրերին Սուսանն ամեն օր անցնում էր Ղուկասի սենյակի մոտով ու նորից ետ դառնում սրտաբեկ։

Այստեղ արդեն նույն ածականով արտահայտված ձևի պարագան չի տրոհվում, որովհետև բաղմակի չէ (ծավալուն լրացում չէ)։

3. Լրացումների տրոհմանը նպաստում է նաև լրացում համարվող բառի կամ բառակապակցության պարզաբանող բնույթը. որքան որոշակի է լրացման այդ բնույթը, այնքան հավանական է տրոհումը։

Բերենք օրինակ.

Տղամարդիկ... աչքով-ունքով լռեցրին նրան և իրենք դուրս եկան պարտեզ՝ ծառերի տակ (Ստ. Զորյան, «Զաքարի հարսը»)։

Այս նախադասության մեջ «ծառերի տակ» լրացումը տրոհվել է շնորհիվ իր պարզաբանող բնույթի, նա կոնկրետացնում, ավելի որոշակի է դարձնում տեղը։

Հենց թնկուզ այն փաստը, որ բացահայտիչը միշտ էլ տրոհվում է իր բացահայտյալից. խոսում է հօգուտ այն բանի, որ լրացման բացահայտող բնույթը նրա տրոհման հարցում վճռական դեր է կատարում։

4. Տրոհման կարիք զգացվում է նաև այն դեպքում, երբ լրացման ու լրացյալի միջև նրանց հետ քերականորեն չկապակցված բառ կամ բառակապակցություն է ընկնում։ Օրինակ.

Վարդանյանը նայեց կոմխարի՝ անքնությունից կարմրած, ուռած կոպերով աչքերին (Ռ. Վերդյան, «Գնեզ համար, Լենինգրադ»)։

Այս օրինակում գոյականների հատկացուցիչ-հատկացյալ հարաբերություն կա. «Կոմիսարի» բառը «աչքերին» բառի հատկացուցիչն է։ Այդ լրացական կապակցության միջև ընկած են հատկացուցչի հետ քերականորեն չկապակցված «անքնությունից կարմրած» և «ուռած կոպերով» կապակցությունները, որոնք և հատկացուցչի տրոհման պատճառ են դարձել։

* * *

Այժմ անդրադառնանք տրոհվող պարագաների հարցին, ցույց տանք նրանց արտահայտման ձևերն ու միջոցները։

1. ՏՐՈՀՎՈՂ ԶԵՎԻ ՊԱՐԱԳԱ

Տրոհվող ձևի պարագաները հանդես են գալիս բազմաթիվ ձևերով և մեկը մյուսից տարբեր շարադասությամբ. նայած նախադասությանը, տրոհվող

ձևի պարագաները կարող են լինել նախադաս, միջադաս և վերջադաս։ Բերենք օրինակներ.

Գլուխը բարձր բռնած՝ Արևիկը նայում էր ինչ-որ կետի (Ս. Խանդադյան, «Հոդը»)։

Ներս է մտնում Լևոնը՝ հանգիստ և ինքնավստահ քայլերով (Ն. Զարյան, «Հացավանդ»)։

Կառքի ճակատին՝ ինչպես սրբազան դրոշակ, փայլում էր մի արծաթյա խաչ (Ռաֆֆի, «Սամվել»)։

Տրոհվող ձևի պարագաները սովորաբար արտահայտվում են.

1. Բերբայական դարձվածներով, որոնցում հանդես են գալիս՝

ա) Հարակատար դերբայ

Ինչպես, օրինակ՝

Թագավորը դուրս եկավ եկեղեցուց՝ շրջապատված եպիսկոպոսներով ու իշխաններով (Մուրացան, «Դ. Մարզպետունի»)։

Տխուր մտքերով համակված՝ նա մոտեցավ բաց պատուհանին (Ս. Խանդադյան, «Հոդը»)։

Հագած, կապած զենք ու զրահ,
Ձիանք հեծած ամեհի,
Ահա եկել հավաքվել են
Կտրիճները Կովկասի (Հովհ. Թումանյան, «Փարվանա»)։

բ) Անորոշ դերբայ (գործիական հոլովով)

Սև հեղուկը, ուժգին դուրս բխելով երկրի խորքից, հեղեղում էր բուրգերը, արհեստանոցները, կայարանները և մարդկանց (Շիրվանզադե, «Քառոս»)։

Գնում էին նրանք մարգագետիններով՝ ականջ դնելով թռչունների ծլվլոցին... (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

...Մսրա զորքի մեջ տեղ զարկեց՝
Շողացնելով թուր կեծակին (Հովհ. Թումանյան,
«Սասունցի Դավիթ»)։

2. Տրոհվող ձևի պարագան կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով և նրան նախորդող բառերով, որոնց հետ այդ գոյականը կապակցության մեջ է մտնում, և որոնք այս կամ այն կերպ լրացնում են այդ գոյականին լրացում համարվող այդ կապակցության ներսում)։

Բերենք օրինակ.

...Մարոլի մեջ Սուսանի պատկերը տեսնելու երազանքը նրան մղում էր դեպի նա՝ մի անդիմադրելի զորեղ զգացումով (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Տղաները ցրվում են իրենց տները՝ մյուս օրը նորից գալու մտադրությամբ (Սա. Զորյան, «Մի կյանքի պատմություն»)։

3. Տրոհվող ձևի պարագան արտահայտվում է նաև ածականով, որն անպայման վերջադաս և բազմակի է լինում։ Օրինակ՝

Այդ օրերին Սուսանն ամեն օր անցնում էր Ղուկասի սենյակի մոտով ու նորից ետ դառնում՝ տխուր ու սրտարեկ (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Իսկ վրանի մեջ անց ու դարձ էր անում Ցլիկ Ամրամը՝ միայնակ ու մտախոհ (Մուրացան, «Դ. Մարզպետունի»)։

Ածականներով արտահայտված տրոհվող ձևի պարագաները, ինչպես

երևում է մեր նախադասություններից, արտահայտում են հոգևկան վիճակ, կացություն։

Այսպես՝ առաջին նախադասության մեջ ձևի պարագան է «տխուր ու սրտաբեկ», որը արտահայտում է Սուսանի հոգեվիճակը, ապրումները, իսկ երկրորդում՝ «միայնակ ու մտախոհ», որը արտահայտում է Ցլիկ Ամրամի հոգևկան վիճակը, ապրումները (նա անց ու դարձ էր անում միայնակ ու մտախոհ)։

4. Հաճախ էլ տրոհվող ձևի պարագան արտահայտվում է բառակապակցությամբ, որտեղ բուն լրացումը արտահայտված է լինում տրական հոլովով դրված որևէ գոյականով, իսկ բառակապակցության մյուս բառերը լրացնում են այդ գոյականին՝ ամբողջական դարձնելով բառակապակցությունը։ Լրացում հանդիսացող այդ բառակապակցության մեջ տրական հոլովով դրված գոյականի մոտ սովորաբար զգացվում է որևէ հարակատար դերբայի կարիք, որը չի օգտագործվում, բայց մտքից հասկացվում է։ Օրինակ՝

Սուսանը դուրս եկավ սենյակին կից խոհանոցից՝ վառած մոմը ձեռքին (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Մտավ էքսպեդիտորը՝ պոստից բերած մի կույտ լրագրեր և նամակներ ձեռքին (Նար-Դոս, հատ. 1-ին, էջ 45)։

Մեկը գալիս է առջևից՝ մի լայն բան գլխին, մյուսը նրա կողքին՝ մի կապոց բռնած (Սա. Զորյան, «Մի կյանքի պատմություն»)։

Ամենից առաջ գնում էին երեխաները լողանալու փարաջաները ձեռքներին, բոխչան շալակներին (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Բերված բոլոր օրինակներում ընդգծված կապակցությունները տրոհվող ձևի պարագաներ են, որոնցում տրական հոլովով դրված գոյականների հետ հասկացվում է նաև համապատասխան բայի հարակատար ձևը. այսպես բռնած (ձեռքին բռնած), դրած (գլխին դրած), գցած (շալակներին գցած)։

5. Տրոհվող ձևի պարագան երբեմն էլ արտահայտվում է կապով և կապի խնդիր կապակցությամբ։ Օրինակ՝

Եվ մի ժամ հետո հեռացա կրկին՝

Արյունի հետքեր՝ ձեռքերիս վրա (Չարենց, «Ընտիր երկեր», 1935 թ., 402)։

Դուռը ճռռալով բացվեց և ներս մտավ Գրիգոր Սահակյանը պարկի մեջ փաթաթած կապոցը թևի տակ (Ն. Զարյան, «Հացավան»)։

Այս նախադասություններում «արյունի հետքեր ձեռքերիս վրա» և «պարկի մեջ փաթաթած կապոցը թևի տակ» կապակցությունները, որոնք ձևի պարագաներ են, արտահայտված են կապով և կապի խնդիր կապակցությամբ։ Առաջին նախադասության մեջ կապն է վրա (ձեռքերիս վրա), իսկ երկրորդում՝ տակ (կապոցը թևի տակ)։

Երբ կապի խնդիրը արտահայտված է լինում անորոշ դերբայի տրական հոլովով, նրա հետ, սովորաբար, օգտագործվում է առանց կապը.

Այսպես՝

Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խոսելու, սևակնած, դաժան
Մոանցավ սրահին, կախ տվեց սնին
Սև հրացանը՝ սև օձի նման (Հովհ. Թումանյան, «Անուշ»)։

Առանց ուշ դարձնելու Շուշանիկի հուսահատական ճիչերի վրա՝ նա քաշեց օրիորդին դեպի դուրս (Շիրվանզադե, «Քառոս»)։

Մալխասյանցը, առանց նրա դեմքին նայելու անգամ, ներս մտավ (Նար-Դոս, «Նոր հավ»)։

Բերված նախադասություններում ընդգծված բառակապակցությունները տրոհվող ձևի պարագաներ են, որոնք արտահայտված են անորոշ դերբայի արական հոլովով՝ առանց կապի օգնությամբ։ Առանց կապի շնորհիվ է, որ այդ կապակցությունները վերագրվում են ստորոգյալին՝ լրացնելով նրան։ Այդ նույն կապի շնորհիվ է, որ լրացում հանդիսացող կապակցությունները ցույց են տալիս, թե ինչպես ենթական կատարում է բուն գործողությունը (ստորոգյալ) առանց այն գործողության, որ լրացում համարվող կապակցության մեջ տրական հոլովով դրված անորոշ դերբայն է ցույց տալիս։

Այսպես՝

«Մալխասյանցը, առանց նրա դեմքին նայելու անգամ, ներս մտավ» նախադասության մեջ «առանց նրա դեմքին նայելու անգամ» լրացումը ցույց է տալիս, որ ենթական (Մալխասյանցը) գործողությունը (ներս մտնել) կատարում է առանց այն գործողության, որ լրացում համարվող կապակցության դերբայն է ցույց տալիս (նայել)։

Եթե նման նախադասություններում չօգտագործենք առանց նախադրությունը, ապա լրացական կապակցության նույն միտքը պահպանելու համար տրական հոլովով դրված անորոշ դերբայը պետք է արտահայտել նույն դերբայի գործիական հոլովի ժխտական ձևով։ Վերոհիշյալ նախադասությունը այս դեպքում կարտահայտվի հետևյալ կերպ.

Մալխասյանցը, չնայելով նրա դեմքին անգամ, ներս մտավ։

Ինչպես տեսնում ենք, նման ձևափոխությունից ոչնչով չի փոխվում բուն նախադասության միտքը, փոխվում է միայն կապակցության արտահայտման ձևը, բայց այն և՛ բովանդակությամբ, և՛ նախադասության մեջ ունեցած իր պաշտոնով չի փոխվում, մնում է որպես ձևի պարագա, արտահայտելով նույն իմաստը («առանց նրա դեմքին նայելու անգամ» և «չնայելով նրա դեմքին անգամ»)։

Երբ տրոհվող ձևի պարագա կապակցության մեջ հանդես են գալիս նման և պես կապերը, ապա այն համեմատություն է ցույց տալիս։ Բերենք օրինակներ.

Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ, ծոել էր գլուխը և նայում էր շուրջը կեղտոտ ապակիների միջից՝ մարդու ցավագար, նպոռտ աչքերի պես (Նար-Դոս, «Հոգուն վրա հասավ»)։

...Բայց Մալին գլուխը կախ, մնում էր իր բանին՝ քարի պես լուռ ու անտարբեր (նույն տեղում)։

Փոթորիկը, մանուկ Մովսեսի զամբյուղի նման, լողում էր ջրի երեսին (Բաֆֆի, «Ղարիբ Մշեցին»)։

Այս օրինակներում ընդգծված կապակցությունները տրոհվող պարագաներ են, որոնք համեմատություն են ցույց տալիս պես և նման կապերի շնորհիվ։ Առաջին և երկրորդ նախադասություններում հանդես է եկել պես կապը («մարդու ցավագար նպոռտ աչքերի պես» և «քարի պես լուռ ու անտարբեր»), իսկ երկրորդում՝ նման («Մանուկ Մովսեսի զամբյուղի նման»)։

6. Երբեմն էլ տրոհվող ձևի պարագաները արտահայտվում են բառակապակցություններով, որոնք համեմատություն են ցույց տալիս կարծես, ինչպես, որպես բառերի շնորհիվ։ Օրինակ՝

Ու չէր հիշում, թե երբվանից էր, որ դաղգահը, կարծես խոր քուն մտած, կանգնած էր երդիկի տակ (Նար-Դոս, «Ինչպես բժշկեցին»)։

Մակուլկի մեջ, լուսնի կաթնագույն լույսի տակ, ինչպես ձյուն, փայլում էր նրա սպիտակ թեթև հանդերձը (Նար-Դոս, «Ես և նա»)։

Հիշյալ լեռների հսկայական շրջանակի մեջ, որպես մի սքանչելի պատկեր, երևում էր Մուշի ընդարձակ դաշտավայրը (Ռաֆֆի, «Սամվել»)։

Այս նախադասություններում ընդգծված լրացումները տրոհվող ձևի պարագաներ են, որոնցից առաջինը համեմատություն է ցույց տալիս կարծես բառի շնորհիվ (կարծես խոր քուն մտած), երկրորդը՝ ինչպես բառի (ինչպես ձյուն), իսկ երրորդը՝ որպես բառի միջոցով (որպես մի սքանչելի պատկեր)։

2. ՏՐՈՀՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Տրոհվող ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը և արտահայտվում է տարբեր ձևերով։

1. Նա ամենից հաճախ արտահայտվում է դերբայական դարձվածներով, որոնցում հանդես են գալիս՝

ա) Անորոշ դերբայ (գործիական հոլովով)

Օտարականը այդ լսելով՝ գլուխը շարժեց և հեռացավ (Ռաֆֆի, «Պարույր Հայկազն»)։

Հասնելով կամրջի դիմացի բլրին՝ նրանք կանգ առան (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Ներսեսի գալն իմանալով՝ Պապը գնաց գահասրահ (Ստ. Զորյան, «Պապ թագավոր»)։

Վերոհիշյալ նախադասություններում ընդգծված դերբայական դարձվածները ժամանակի պարագայի պաշտոն են կատարում և ցույց են տալիս, որ ենթական հիմնական գործողությունը կատարում է դերբայական դարձվածում հանդես եկող անորոշ դերբայի ցույց տված գործողության կատարումից հետո։ Այսպես՝

«Ներսեսի գալն իմանալով՝ Պապը գնաց գահասրահ» նախադասության մեջ Ներսեսի գալն իմանալով տրոհվող ժամանակի պարագան ցույց է տալիս, որ նախադասության ենթական (Պապը) գործողությունը (գնաց) կատարում է պարագա հանդիսացող դերբայական դարձվածում հանդես եկող դերբայի (իմանալով) ցույց տված գործողության կատարումից հետո (առաջ իմանում է Ներսեսի գալը, ապա՝ կատարում հիմնական գործողությունը՝ գնում է գահասրահ)։

բ) Ելիս, ալիս (իս) վերջավորությամբ անկատար դերբայ, օրինակ՝

Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
Էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել՝

Իր որսն անելիս մըթին սարերում (Հովհ. Թումանյան, «Փարվանա»)։

Այլևս չկար այն երկյուղը, որ պաշարում էր հայ զորականին՝ հազարացու հարձակման լուրը լսելիս (Մուրացան, «Գևորգ Մարզպետունի»)։

Այս նախադասություններում ընդգծված տրոհվող ժամանակի պարագաները արտահայտված են դերբայական դարձվածներով, որոնցում հանդես եկող դերբայը անկատար է։ Այս ժամանակի պարագաները ցույց են

տալիս, որ ենթական գործողությունը կատարում է անկատար դերբայի ցույց տված գործողության հետ միաժամանակ։ Այսպես՝

«— Անգլիական է, գրավված է Հյուսիսային Կովկասում՝ Դենիկինին ջախջախելիս» նախադասության մեջ «Դենիկինին ջախջախելիս» պարագան ցույց է տալիս, որ գրավելու գործողությունը (հիմնական գործողություն՝ ստորոգյալ) կատարվել է ջախջախելու գործողության հետ միաժամանակ։

գ) Հարակատար դերբայ, օրինակ՝

Դեռ ներս չմտած՝ ժամկոչի և նրա թոռան երեսին ներսից տաք օդի... խոնավ հոսանք փչեց... (Նար-Դոս, «Ավետիս»)։

Սակայն դեռ տուն չհասած՝ հանկարծ ոտքերի մեջ ինչ-որ թուլություն զգաց, մարմինը բռնվեց անախորժ դողով (Ս. Հովսեփյան, «Սիրտ»)։

Մի փոքր անցած՝ ներս մտան Սմբատ և Միքայել Ալիմյանները (Շիրվանզադե, «Փաոս»)։

Բերված օրինակներում ընդգծված պարագաները արտահայտված են դերբայական դարձվածներով, որոնցում դերբայը հարակատար է և ժխտական չլինելու դեպքում ցույց է տալիս, որ այդ գործողության կատարումից հետո է կատարվում բուն գործողությունը՝ ստորոգյալի պաշտոն կատարող բայի ցույց տված գործողությունը, ինչպես մեր երրորդ նախադասության մեջ (Մի փոքր անցած՝ ներս մտան), իսկ ժխտական լինելու դեպքում, ինչպես մեր և առաջին երկրորդ նախադասություններում (ներս չմտած, տուն չհասած), ցույց է տալիս, որ բուն գործողությունը կատարվում է դերբայի ցույց տված գործողության կատարումից առաջ։

2. Տրոհվող ժամանակի պարագաները հաճախ էլ արտահայտում են մոտավոր, անորոշ ժամանակ ցույց տվող բառակապակցությամբ։ Օրինակ՝

Սակայն մի փոքր անց, իրիցկինը նկատողություն էր անում մի ուրիշ սխալվող աշակերտի (Ստ. Զորյան, «Մի կյանքի պատմություն»)։

Հեռավոր Չինաստանում, մեզանից շատ ժամանակ առաջ, մի կայսր է եղել (Ավ. Իսահակյան, «Չինական մի հին զրույց»)։

3. Տրոհվող ժամանակի պարագան արտահայտվում է նաև բառակապակցությամբ, որտեղ ժամանակի գաղափարը արտահայտվում է անորոշ դերբայի կամ որևէ գոյականի բացառական հոլովով՝ ոեռտո նտադրության օգնությամբ։ Այսպես՝

Վերջին գործողությունները կատարելուց հետո, նա փաթեթը ձգեց ծովի մեջ (Բաֆֆի, «Ղարիբ Մշեցին»)։

Մի քանի այդպիսի խոսակցություններից հետո, երիտասարդը հեռացավ, թեև տիկինը շատ ստիպում էր, որ ճաշին իրենց մոտ մնա (Բաֆֆի, «Ով էր մեղավոր»)։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տրոհվող ժամանակի պարագան հանդես է գալիս ինչպես նախադաս, այնպես էլ վերջադաս գործածությամբ։

3. ՏՐՈՀՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

Տրոհվող պատճառի պարագան ցույց է տալիս ենթակայի գործողության կատարման պատճառը և, սովորաբար, արտահայտվում է դերբայական դարձվածներով, որոնցում հանդես են գալիս՝

ա) Անորոշ դերբայ՝ գործիական հոլովով։ Օրինակ՝

Երեք օր առաջ ենթարկվելով ծանր խոշտանգումների՝ նրանք այժմ սուր ցավերից չէին կարողանում որևէ շարժում անել (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Տիտանյանը զբաղված լինելով հիվանդով՝ չնկատեց եկող ոստիկանին (Գ. Սևունց, «Թևհրան»)։

Օրը ուրբաթ լինելով, փաշան չէր դնացել բարձր դուռը (Բաֆֆի, «Լաբիբ Մշեցին»)։

Ինչպես տեսնում ենք, ընդգծված դերբայական դարձվածները, որոնք պատճառի պարագայի պաշտոն են կատարում, ցույց են տալիս, որ այդ դերբայական դարձվածներում հանդես եկող դերբայների ցույց տված գործողությունը պատճառ է դարձել բուն գործողության՝ ենթակայի գործողության կատարման։ Մեր երկրորդ նախադասության մեջ հիվանդով զբաղված լինելն է եղել պատճառը, որ Տիտանյանը չի նկատել ոստիկանին, իսկ երրորդ նախադասության մեջ օրվա ուրբաթ լինելու պատճառով է, որ փաշան բարձր դուռ չի գնացել։

բ) Հարակատար դերբայ։

Տարված իրենց երգով ու աշխատանքով՝ նրանք չնկատեցին այն սև կերպարանքը, որ կամաց մոտեցավ դռանը (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)

Մարիամը, նրա զվարճություններով զմայլված, ամենևին չէր զգում ճանապարհի երկարությունը (Բաֆֆի, «Անմեղ վաճառք»)։

Այս օրինակներում ձևի պարագայի պաշտոն կատարող դերբայական դարձվածներում հանդես եկող դերբայները հարակատար են (տարված, զմայլված) և ցույց են տալիս, որ այդ գործողությունն է պատճառ դարձել ստորոգյալի պաշտոն կատարող բայի ցույց տված գործողության կատարման։

2. Տրոհվող պատճառի պարագան երբեմն էլ արտահայտվում է կապով և կապի խնդիր կապակցությամբ. նման դեպքերում, սովորաբար հանդես են գալիս համար կապը կամ պատճառով կապական բառը։ Օրինակ՝

Գյուղրաժնի վարիչն սպառնաց նրա հարցը տեղափոխել շրջկոմի բյուրո սիլոսի պլանը չկատարելու համար... (Ս. Խանդադյան, «Հողը»)։

Հավաքված արհեստավորները, օրը կիրակի լինելու պատճառով, ջրում և ավելում էին արհեստանոցների առջև... (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

4. ՏՐՈՀՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Հայերենում տրոհվող նպատակի պարագաներն արտահայտվում են՝

1. Դերբայական դարձվածներով, որոնցում հանդես են գալիս՝

ա) Անորոշ դերբայ՝ տրական հոլովով։

բ) Անորոշ դերբայ՝ գործիական հոլովով։

2. Երբեմն դերբայական դարձվածում հանդես է գալիս համար կապը, որը դրվում է անորոշ դերբայի սեռականի վրա՝ արտահայտելով կապի խնդիր կապակցության պաշտոնը նախադասության մեջ և այն կապելով ստորոգյալի հետ։ Օրինակ՝

Գիտեին, որ ուստի բարկության ժամանակ պետք է ձայն չհանել բարկությունը իրենց վրա թափել չտալու համար (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Համար կապի փոխարեն երբեմն օգտագործվում է նպատակով բառը, որը ճիշտ նույն դերն է կատարում (այս դեպքում), ինչ որ համար կապը։ Օրինակ՝

—Ինչքա՞ն մարդ է տեղավորվում դահլիճում,—հարցրի Սուրենին՝ նրա հետ ծանոթանալու նպատակով (Ս. Խանզադյան, «Հողը»)։

3. Տրոհվող նպատակի պարագան երբեմն էլ արտահայտվում է գոյականի տրական հոլովով։

5. ՏՐՈՀՎՈՂ ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

Տրոհվող հիմունքի պարագան, սովորաբար, արտահայտվում է ծավալուն բառակապակցություններով, որոնք ցույց են տալիս ենթակայի գործողության կատարման հիմունքը։ Այդ կապակցություններն արտահայտվում են՝

1. Դերբայական դարձվածով, որտեղ հանդես է գալիս գործիական հոլովով անորոշ դերբայ։ Օրինակ՝

Ու մարդիկ, նրա խոսքը լսելով, ուրիշ հարանացու են ընտրում (Ստ. Զորյան, «Մի կյանքի պատմություն»)։

Նախարարներից ոմանք, նրա օրինակին հետևելով, յուրաքանչյուրը ձգտում էր իր իշխանության թագավորը լինել (Բաֆֆի, «Պարույր Հայկազն»)։

2. Տրոհվող հիմունքի պարագանները հաճախ արտահայտվում են բառակապակցություններով, որոնցում հանդես են գալիս շնորհիվ և համաձայն կապական բառերը, որոնք և արտահայտում են այդ կապակցությունների պաշտոնը (հիմունքի պարագա լինելը) նախադասության մեջ։

6. ՏՐՈՀՎՈՂ ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

1. Տրոհվող հակառակ հիմունքի պարագանները մեծ մասամբ արտահայտվում են դերբայական դարձվածներով, որոնցում հանդես են գալիս՝

ա) Անորոշ դերբայի գործիական հոլովի ժխտական ձևը։ Օրինակ՝

...կկկելը, չնայելով իր բոլոր վրդովմունքին, սկսեց ակամա կերպով ծիծաղել (Բաֆֆի, «Անմեղ վաճառք»)։

Մյուս օրը, չնայելով արևադարձային խոնավ եղանակին, Սահակ Պարթևը և Մեսրոպը վաղ առավոտյան ներկայացան տիկին Մամիկոնյանին (Բաֆֆի, «Սամվել»)։

բ) Հարակատար դերբայի ժխտական ձևը. այսպես՝

Չնայած քեռի Ղուկասի փնթփնթոցին՝ հացավանում Լևոնի հեղինակությունը աճում էր (Ն. Զարյան, «Հացավան»)։

Չնայած տարիքով փոքր՝ պապիս հետ խոսում էր իբրև նրանից մեծ (Ստ. Զորյան, «Մի կյանքի պատմություն»)։

Ինչպես տեսնում ենք, հակառակ հիմունքի պարագայի պաշտոն կատարող դերբայական դարձվածներում հանդես եկող թե՛ անորոշ և թե՛ հարակատար դերբայները ժխտված են չ ժխտական մասնիկի միջոցով։

2. Հակառակ հիմունքի պարագայի պաշտոն կատարող բառակապակցություններում գործածվում են փոխարեն և հակառակ կապերը, որոնք և արտահայտում են այդ կապակցությունների պաշտոնը նախադասության մեջ։ Օրինակ՝

Քաղաքի շուկան գնալու փոխարեն՝ նա սալլը քշեց և բերեց նեղլիկ մի նրբանցք... (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Կոլխոզի նախագահը, հակառակ իր սովորության, այսօր նույնպես մռայլ էր (Ն. Զարյան, «Հացավան»)։

Փերեզակ կինը, հակառակ յուր սովորական շատախոսության, այդ բոպեում լուռ էր (Բաֆֆի, «Ղարիբ Մշեցին»)։

7. ՏՐՈՀՎՈՂ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱ

Տրոհվող միասնության պարագաները արտահայտվում են՝

1. Հետ կապով և կապի խնդիր կապակցությամբ։ Օրինակ՝

Մորդվինովը նստեց վերևում՝ կնոջ հետ (Ա. Հովսեփյան, «Սիրտ»)։

Ճաշից հետո դուրս եկավ Արշակը՝ Ալեքսեյ Իվանովիչի հետ (Շիրվանզադե, «Քաոս»)։

2. Գոյականի գործիական հոլովով, որն անպայման ետադաս է գործածվում։ Օրինակ՝

Ամենից վերջը հասավ Արասը յուր դրանիկներով ու ազատանիներով... (Մուրացան, «Դեորդ Մարգպետունի»)։

...Այստեղ են ապրում պարսից Զիկ զորավարը և Մերուժան Արծրունին՝ իրենց մարդկանցով, ճամհարզներով (Ստ. Զորյան, «Պապ թագավոր»)։

2. Կապի խնդրով և հետ կապով արտահայտված տրոհվող միասնության պարագայի պաշտոն կատարող կապակցություններում հաճախ գործածվում են միասին կամ միաժամանակ բառերը, որոնք դրվում են հետ կապից անմիջապես հետո։ Այսպես՝

Եվ այժմ բանակը, կամովին միացած և զործիքներով զինված շինականների հետ միասին, հանդստանում էր այդ լեռան լանջին... (Ստ. Զորյան, «Պապ թագավոր»)։

Ինչպես միասին, այնպես էլ միաժամանակ բառերը այդպիսի դեպքերում ունեն միայն ոճական նշանակություն և ավելի են շեշտում միասնության գաղափարը, իսկ այդ գաղափարը հիմնականում արտահայտվում է կապի խնդրի և հետ կապի միջոցով։

8. ՏՐՈՀՎՈՂ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

Տրոհվող տեղի պարագաներ, սովորաբար, քիչ են պատահում և լինում են միայն ետադաս՝ արտահայտված ծավալուն բառակապակցություններով։

Շարադրելով այս ամենը՝ ամենևին էլ հավանականություն չունենք կարծելու, թե այդ սպառիչ և վերջին խոսքն է այս թեմայի վերաբերյալ։ Մեր կարծիքով, սույն թեման սպասում է իր մանրակրկիտ ուսումնասիրողին, և հետևողական ուսումնասիրությունը կտա իր դրական արդյունքը։